

Իր-----Ի՛նչ

S Մտթէոս Ծ. Վ. Իզմիրլեան
S. Գրիգոր քահանայ Աճէմեան
Սենեքերիմ էֆէնտի Մանուկեան

Ն-Ի-՛նչ-----Ի՛նչ

Վարապետ էֆ. Հասպազեան
Ստեփան ,, Փափազեան
Յովսէփ ,, Մաղլումեան

Խ-Ի-՛նչ-----Ի՛նչ

Խաչատուր էֆ. Միսաքեան
Վարապետ ,, Ի. Թիւճեան
Յարութիւն ,, Մէրեքմէզուրի

Վարդը գալով Քաղաքական ժողովոյ հրաժարադրոյն՝ Իրաւասութեան զիւանին նախաքննութեան յանձնուեցաւ:

Վարդացուեցաւ նաև Խառն ժողովոյ մէկ զիրը՝ որով կառավարէ օրինադրել, որ ինչպէս Ս. Էջմիածնի և Երուսաղիմայ՝ նոյնպէս ուրիշ վանքերէն միաբան կրօնաւորաց զոյքը, յետ մահուան նոցին, վանքին մնայ, Այս կարևոր առաջարկութիւնն ալ՝ յանձնեցաւ ի նախաքննութիւն կալուածոց և նախաձեռնութեան զիւանաց:

Ատենապետ փաշան, այս յանձնարարութիւններէն յետոյ, յիշեցոյց ժողովոյն՝ Վարչութեան համարատուութեան անհրաժեշտ պէտքն, նշանակեց նախորդ զիւանաց կողմանէ եկած տեղեկագիրներն, որոնք օրակարգն անցան, և ամեն Ս. Պատրիարքէն խնդրեց յանուն ժողովոյ՝ որ ասկէց յառաջ զիւանաց ուղղեալ կամ ուղղելի խնդրոց համար ալ պէտք եղած կարգադրութիւններն ընել բարեհաճի, եւ ատենը գոցից:

Ստեփան փաշա՝ զեռ զիւանէն չիջած՝ երեսփոխանաց շատերը իրենց գոհունակութիւնն ու շնորհակալիքը յայտնեցին՝ Նորին վսեմութեան՝ մի առ մի իրեն երթալով:

Փետր. Թ. 987. Մայիս 24.

Հետեւեալ բերկրառիթ և նշանաւոր լուրը արժան կհամարիմք հաղորդել մեր ընթերցողաց ի մխիթարութիւնս:

ԿՏԱԿ.

Հատոնց իմացած էինք թէ՛ Քարակէօղեան Մեծ. Եղբարք մեծագումար կտակ մը ըրած են ազգին՝ ատով Վաճառականական դպրոց մը բանալու, բայց Վտակարարք չուզելով անունին յայտնել, պարտաւորած էինք լուռ կենալ՝ իրենց կամաց հակառակ չը վարուելու համար. սակայն անցեալ շաբթու Հայրենիքի, անկէ ետքն ալ Մամուլի մէջ հրատարակեալ տեսնելով այս ուրախառիթ լուրն, ալ լուսթիւն պահելնուս հարկ մը չէ մնացած:

Ասկէ 7-8 տարի առաջ Քարակէօղեանց եղբայրն Բիւզանդ էֆ. մեռնելուն՝ անոր ժառանգութիւնը կը բաժնուի իւր եղբարցը, որոցմէ Մեծ. Մ. Գրիգոր, Տիգրան և Վարապետ էֆէնտիներն չուզելով իրենց բաժնին ինկած հինգ հազարական լիրան ընդունիլ, լռելայն և առանց մէկու մը բան մը ըսելու՝ կը նուիրեն զայն ազգին՝ այդ 15 հազար լիրան զատ շահեցնելով. որպէս զի մեծ գումարի մը հասնելուն՝ նպատակին գործադրելու եղեն, երբ Վարապետ էֆ. կը վախճանի՝ անոր ժառանգութեան բաժանման միջոցին՝ այդ 15 հազար լիրայի գործողութեանց տետրակը կը գտնուի վաճառատան մէջ, որմէ կը հասկցուի թէ՛ 45 հազար *) լիրայի հասեր է. խնդրի կը ծագի այս մասին հանգուցեալ Վարապետ էֆ.ի եղբարցը և աներոյն մէջ տեղը, բայց վերջապէս հաստատուելով՝ թէ Վարապետ էֆ. իւր կենդանութեանը իւր ազատ յօժարութեամբը՝ իր բաժնին ինկած այդ գումարը նուիրած է ազգին, համաձայնութիւն կը գոյանայ մէջերնին և զաղանիքը երեւան կընէ, որմէ յետոյ կըսկսին զբաղիլ կտա-

(*) Մի քանի լրագրաց մէջ նոյն գումարի համար ասորիւրութիւնը կան, և մի լրագրի 50.000 լիրայի կհասցեն:

Եթէ մի լիրայն եօթն մանեթով հաշուենք, 45 հազար լիրայն 315000 ուրբէաց չափ կըլինի:

կին պայմաններուն վրայ, և որ տակաւին աւարտած չէ: Այս կտակին զխաւոր պայմաններն են՝ հողը արդէն ազգին եղած գետնի մը վրայ ընդարձակ Հայ Վաճառականական դպրոց մը կանգնել, որ պիտի կառավարուի յատկապէս Եւրոպայէն բերուած տնօրէնի մը և 7-8 Հայ վաճառականներէ բաղկացեալ տնօրէն խորհրդոյ մը ձեռամբ որոյ նախագահը պիտի ըլլայ Գարակէօզեան գերդաստանէն մէկը: Հոն 30 ի չափ աղքատ տղայք ձրի պիտի ուսանին՝ անկէ աւելին թողակաւոր ըլլալով, այդ ձրի աղքատ տղայոց՝ դպրոցէն ելնելէն վերջը գործ մը գտնելը անհրաժեշտ պարտականութիւնը պիտի ըլլայ տնօրէն խորհրդոյն:

Առ այժմ՝ կը լսենք թէ՛ Բերայի գերեզմանատան մէկ պարագ տեղը պիտի կառուցուի այդ վարժարանը և եկամուտներն ալ Բերայի մէջ ծախու պիտի աւելունչ որով հրամանագիրը խիստ հաւանական է որ զիւրութեամբ կատարուի վաւրն զի ո՞վ կրնայ երեակայել թէ երկրին կրկին մեծ շահ խոստացող այսպիսի հաստատութեան մը հրամանը զւացուի կրկին շահ կրսնքը, մէկն այն է, թէ՛ օսմանեան կայսրութեան մէջ վաճառականութիւնը պիտի ծաղկի և օտարաց մեր երկրէն քաջած անհամար ուկին երկրին մէջ պիտի մնայ, երկրորդն այն է թէ՛ Բերայի գերեզմանատան պէս ամայի և անշէն մնացած ընտիր հող մը, իր մէջ պարունակելով այդ մեծ հաստատութիւնը պիտի ծաղկի ու տէրութեան մեծագումար տուրք հայթայթելու վիճակը պիտի մտնէ:

Երդ յանուն ազգին և յանուն ապագայ սերունդեան մեր խորին շնորհակալութիւնն յայտնելով Քարակէօզեան մեծ, եղբարց, յանձունս կը փափաքինք որ ժամ յոռաջ այս մեծ գործին սկսիլը տեսնելու բարեբաղդութիւնն ունենայինք:

Ազգ մը երբ վաճառականութեան մէջ յառաջացած է ըսել է ինչպէս է յունաց ազգը իւր բարոյական զօրութիւնը միմիայն իւր վաճառականութեան մէջ յառաջանալուն կը պարտաւորուի: Երանի թէ Հայոց ազգն ալ իրօք յառաջանալու վաճառականութեան մէջ և իւր հաւատարմութեան ընդարձայն ընտրութիւնը՝ ի մասին վաճառականութեան գործած էր, որով համար եթէ զրամ և զիւրութիւն հարկաւոր է ասոնցմէ ոչ

նուազ հարկաւոր է նաև հաւատարմութիւն, ուղղութիւն և վեհանձնութիւն:

Օրագիր Թ. 1345, Մայիս 26:

Հետեւեալը ևս Հայրենիքէն կ'բաղկուի:

Երկուշաբթի առաջ ծանուցինք թէ՛ Գարակէօզեան մեծ, եղբարց Ազգային վարժարանի մը հաստատութեան 50,000 ոսկի կտակած են:

Իրդ բերկրութեամբ կը ծանուցանեմք թէ՛ այս մասին իրենց մէջ ծագած անհամաձայնութիւնն ալ վերնալով, սոյն ահագին դուստրը երէկ (Յունիս 2) բեռնակիրներով Գարակէօզեան վաճառատունէն Պօլսոյ Պէզէսթէնը փոխադրուեցաւ:

Գարակէօզեան եղբարց սոյն անդուգական մեծագործութիւնը տոտաղին շնորհակալութեանց և անմահ յիշատակաց արժանի գործ մ' է:

Ապրիլն և շատ ապրիլն այսպիսի ազնիւ անձերը:

Թ. 250, Յունիս 5:

Ժ.Ե. ԲԵՏԱՐԵԴԱՐԸ

Ա.Զ.Գ. ՍԱՀԽԱՆԵԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՅՈՑ

ԹՈՒՐԿԻՈՅ.

Հակառակ կարծեաց ոմանց՝ Սահմանադրութեան տարեդարձի հանդէսը այս տարի ուրիշ քանի մը տարիներէ աւելի շքեղ ու բարեկարգ կերպիւ կատարուեցաւ կիւրակէ օրը՝ Պէյքօղ Հինքեար - Իսկէշէին, Յատկապէս վարձեալ և Հիւրքէթի շոգնաւաներով, և բազմութիւ նաւաներով 5000 ի չափ բազմութիւն ազգայնոց գացած էին: Իզմիրեան գեր. Տ. Մատթէոս վարդապետ Ս. Պատարագ մատոյց Պէյքօղի եկեղեցոյն մէջ, ընտիր ատենախօսութիւն մ' ըրաւ և բարեմաղթեց Օգոստոսիան Սուլթանին, ազգին Սահմանադրութեան և այլոց համար, Եկեղեցին տանող ծամբան այս տարի ալ զարդարուած էր ի շնորհս Թաղական խորհրդոյ տեղւոյն:

Հինքեար - Իսկէշէինի զաշտափայրը շրջանակներ կային, յորոց մէկուն մէջ ի սեղան բաղմեցան գեր. Իզմիրեան, Արեւփոխանաց ոմանք և այլ պատուաւոր անձինք: այս սեղանին վրայ համառօտ ատենախօսութիւններ եղան և ջիւր բա-